

ՄԵԾ ԱՂԷՏԷՆ ՍՓԻԻՌ

ԿԱՄ

ՆԵՐԿԱՅԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄԸ

«Մենք գաղթական ենք,
գաղթական չըլլալով համոզված:
Մենք սփիւտք ենք:
Գաղթականը կը մերգաղթէ, Սփիւտքը՝ ոչ:
Հո՛ւ է մեր ազգային վերքը,
որ կը կոտորայ»¹

ԹՂՈՒՄ ԵՒ ՆՈՐ ՀԱՄԱԳՐՈՒՄԻ ՊԱՀԱՆՁ

1995 տարին կը լրանար Ապտիւլ Համիտի կողմէ կազմակերպուած 1894–1896ի համատարած ջարդերուն 100ամեակը եւ 1915ի Հայկական Ցեղասպանութեան 80ամեակը:

Դարերէ ի վեր թուրքին քաղաքական ու բարոյական դիմադիծը չէ փոխուած ու ցեղասպանութիւնը մեր վրայ կը շարունակէ ձգել իր շուքը, ինչպէս իր ներքին աւերը: Թուրքը, որուն ահաւոր զարհուրանքին մէջ ապրեցան մեր հայրերն ու մայրերը, որուն յաճախանքը, մահացու մանրէի նման մտած է մեր ոգեկան աշխարհին մէջ եւ անոնց ժխտական ազդեցութեան դէմ միակ դարմանը՝ ժամանակին ու կեանքին բուժիչ ներգործութեան ձգած ենք: Այսինքն, ցարդ արմատապէս ոչինչ ըրած ենք այդ վնասակար խոցը մաքրելու, բուժելու եւ անոր թոյնը դուրս նետելու մեր զգացական ու մտածումի երակներէն:

1. ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐ, Կրակը կողքիս, Փարիզ, 1973, էջ 76:

Թուրքերը պաշտոնապես կը շարունակեն ուրանալ 1915ի Հայկական Յեղասպանութեան ճշմարտութիւնը, սակայն կը թուի թէ Թուրք մտաւորական «պարկեշտ» խաւ մը վերջերս սկսած է լոյսին գալ ու դժգոհ ըլլալ ծածկումի այս քաղաքականութենէն: Բայց անոնց անդիշող ուրացումը պատմական Յեղասպանութեան՝ միայն քարացած քաղաքականութեան, մեռած խղճմտանքի, տհաս մտածողութեան եւ քաջութեան պակասի մը փաստը կը մնայ:

Իսկ մեր կողմէ՝ Ադէտը չէ մարսուած տակաւին. եւ արդեօք ինչպէս կարելի է յարմարիլ նման աղէտներուն հետեւանքներուն հետ, երբ, ինչպէս Յակոբ Օշական տեղ մը կը նշէ, Աստուրը, Տարագրութիւնը՝ մեր հաւաքականութեան մեծագոյն իմֆնասփոռումը եղաւ. այսինքն ա՛յն որ կազմալուծեց մեր ազգային հաւաքականութիւնը եւ սփռեց...:

Սփռուքը կը թելադրէ ցրուումի, սփռումի վիճակ եւ կամ՝ հեռաւորութիւն: Անշուշտ այս յղացքը կ'ենթադրէ որ կեդրոն մը կայ եւ ցրուում մը՝ որ կ'առնէ կը տանի նաեւ միութիւնը, կեդրոնականութիւնը: Աքսորը, յստակ է, կեդրոնի ու միութեան վիճակէն հեռացումն է:

Միւս կողմէ, սակայն, հոգեբանական, ընկերային, ազգային ու մանաւանդ քաղաքական տեսակէտէն՝ այլեւս պահանջ է, որ Յեղասպանութեան մասին նկարագրական ու վկայագրական գրութիւններու կողքին՝ ցուցաբերենք շատ աւելի շեշտուած «մտածումի» եւ «մեկնաբանական» կեցուածքներ, որովհետեւ միայն ա՛յդ մօտեցումով պիտի ըմբռնենք ու պիտի տրամաբանենք եղելութեան բուն էութիւնը եւ հայու մեր «ներկան» յաջողինք գետեղել նոր հասկացողութեան եւ տեսութեան պատահի մը վրայ: Ծիշտ է, որ Մեծ Ադէտը, Յեղասպանութիւնը, եւ անոր ահազնութիւնը՝ բանականութենէն, մարդկային խիղճէն եւ օրէնքներէն անդին անցնող սարսափելի եղելութիւն մըն է, որ ընդհանուր տեսակէտով, մեզի համար կը մնայ տակաւին անհամեմատելի եւ անըմբռնելի իրականութիւն, ինչպէս անդր-տրամաբանական ու անբացատրելի, բայց անոր Զայնը, 1915էն ի վեր, անլուելի դառն յիշողութեան մը պէս կու գայ պատմելու եղելութիւն մը զանգուածային կոտորածի, փճացումի, կորուստի, սփռումի, զրկանքի, քայքայումի եւ օտարութեան: Ծիշտ է նաեւ որ Մեծ Ադէտը «սկիզբն է սփիւռքեան փորձառութեան» մը, որ կը բերէ նաեւ սկիզբի մը որոնումը, փնտռումը նոր ուղիի մը, յետ 1915ի հայութեան իրական հոլովոյթը տեսնելու, թափանցելու, հասկնալու եւ մանաւանդ մեր «Հայ ներկան» ըմբռնելու:

Հայկական վերջին ու մեծագոյն կոտորածներուն 100 եւ 80ամեակները, առիթ կու տան մեզի՝ փշրանք մը յիշողութիւն բերելու այդ ահաւոր սպանդներէն եւ անոնց խորունկ ու դաժան նկարին մէջ

դիտելու «ներկան», որ անպայման մերն է այսօր իբրեւ «ՍփիիՌ», ասոր ստեղծած հազարամէկ ծուռ ու շիտակ գիծերով. առիթ՝ քաջաբար ինքզինքնիս դէմ դիմաց դնելու ներքին հաշուեյարդարի մը եւ արտաքին ազդակներու ամէնէն արմատական ու մտահոգիչ հարցականներուն հետ: Տեսնել «հայ ներկան» ու փորձութեան ենթարկել մեր «հայկական խղճմտանքը», գիտակցութիւնը եւ քալել հասուն ու մշակուած ժողովուրդի մը յատուկ վարքագիծով:

Մեր հաւաքական շահը կը պահանջէ տեղ մը փշրել Ցեղասպանական այդ արարքին անէծքը, որ հարուածած է, կարծէք, թէ՛ զոհը եւ թէ՛ ոճրագործը հաւասարապէս ու կը տեւէ սերունդներով²:

Պէտք է փորձել նոր տրամադրութիւններով, նոր մօտեցումներով ու միջոցներով փոխել ընթացքը նման վնասակար կեցուածքներուն.

2. Այս տեսակէտէն, հետաքրքրական պիտի ըլլար, եթէ ձեռնհաս մասնագէտ մը յաջողէր քննել թէ թուրքերը, տնտեսութեան կողքին, ի՞նչ կորսնցուցին իրենց մշակութային կեանքին մէջ՝ հայ ժողովուրդի ցեղասպանութեամբ:

Տեղին է յիշել – առանց անշուշտ սակարկութեան դնելու թուրքերուն կողմէ հայկական ցեղասպանութեան ճանաչումի հարցը եւ հողերուն վերադարձը – որ հայ եւ թուրք ժողովուրդներու ոգեկան աշխարհներուն անհրաժեշտ մերձեցումի քանի մը փորձեր կատարուած են անցեալին. Հիմա. օրինակ՝ ԳէՈՐԳ ՄԵՍՐՈՊ, Հայ Արուեստը Թուրքիոյ մէջ, տե՛ս «Հայկարան» (պարբերագրք), Բալվուլոյ, Սոֆիա, 1931, էջ 251–259: ՏԵՂ–ՊԵՏՐՈՍԵԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ, Հայերու սատարը թուրք մշակոյթին եւ տնտեսութեան, Գահիրէ, 1976: ՍՏԵՓԱՆԵԱՆ ԳԱՌՆԻԿ, Հայերի դերը թուրք քաղաքացիական գործում, ըստ թրքական աղբիւրների, Պէյրութ, 1987: KRIKORIAN MESROP, Armenians in the Ottoman Empire 1860-1908, London, 1970. TUGLACI PARSEGH (Բարսեղ Թուղլաճի, Թուղլաճեան), The role of the Balian family in ottoman Architecture, Istanbul, 1990. TUGLACI PARSEGH, Turkish bands of past and present, Istanbul, 1986, ուր կը խօսուի նաեւ Զիլհաններու եւ ուրիշ հայ երաժիշտներու մասին: TUGLACI PARSEGH, Istanbul Adalari, Istanbul, 1989.

Պատմաբան Հրանդ Փաստրմաճեան կը գրէ, թէ «Թրքահայաստանը, համաշխարհային Ա. պատերազմի մախօրեակին, իր տնտեսական աստիճանով կը մերկայացնէր հայերու աշխատունակութեան փայլուն մէկ վկայութիւնը» եւ թէ Թուրքիոյ արհեստագիտական եւ ճարտարարուեստական արտադրութիւնը «Ամրոցութեամբ գրեթէ արդիւնքն էր հայկական աշխատանքին»: Հիմա. Հայոց Պատմութիւն, հտ. Բ., Թրգմ. Մուշեղ Իշխան, Բ. տիպ, Պէյրութ, 1980, էջ 201–202:

Հրաչեայ Աճառեան, անդրադառնալով հայ եւ թուրք մշակութային յարաբերութիւններու մասին, իր մասնագիտութեամբ կը հաստատէ, որ «Եւրոպայի շեմքին ապրող տաճիկներն էլ այնքան եւ չէին մնացած քաղաքակրթութիւնից, որ ոչ միայն չէին կարող առաջնորդ հանդիսանալ հայերին, այլեւ մոյմիսկ մրանցից օգտուելու կարիքի մէջ էին գտնուում: Տեղը է խօսել գրական, գիտական, գեղարուեստական եւ առհասարակ կուլտուրական այն մեծ օգնութեամբ մասին, որ մատուցին հայերը տաճիկներին, բարձրացնելու համար մրանց մտաւոր հորիզոնը: Արհեստներ, արուեստներ, տպարան, գրէր, քաղաք, դպրոց, լրագիր, տառեր, ամէն ինչ կրում է հայ մտաւորականի կնիքը: Գիշ էր մնում, որ մոյմիսկ հայերէն այբուբենը որդեգրէին մրամք». տե՛ս Հայոց Լեզուի Պատմութիւն, հտ. Բ., Նրեան, 1951, էջ 569:

պէտք է մատնանշել թուրքերու կեցուածքին անմարդկային եւ ապա-
բարոյ նկարագիրը. պէտք է փորձել քաղաքակրթել թուրքը ու ցոյց
տալ անոր թէ ո՛րն է իսկական հասուն, մշակուած ու քաղաքակիրթ
ժողովուրդի մը կեանքը, գործը, դիմագիծը:

«Սփիւռքը տրամ մըն է, որ կը շարունակուի. անտեսուած սէր մը,
սուգ մը մասն»³:

Սփիւռքի ազգային եւ ընկերային կեանքին հիմերը եւ մարմինը
մեծ ցնցումներու ենթարկուեցան վերջին երեսուն տարիներուն: Եւ
ինքնապաշտպանութեան շատ խորունկ (անշուշտ՝ անգիտակից) ան-
դրադարձի մը ազդեցութեան հնազանդելու, ազգովին, հին թէ նոր
կեդրոններուն մէջ, հայութիւնը շատ աւելի պահպանողական դարձած
է քան ուրիշ ժամանակ:

Սակայն, ժամանակն է այլեւս խորհելու նոր «համադրութեան» մը
մասին, թէ եւ երեւութապէս տակաւին անբնորոշելի է ու կը փախչի հայ
մտքի հասանելիութենէն: Այսինքն «Փրկել հայ միտքը, արդարացնել
սփիւռքը»⁴:

Այս միտքը կը մղէ այլեւս «օտարութիւն»ը մտածելու իբրեւ մեր
գոյութեան ու գիտակցութեան անբաժան իրականութիւնը եւ բացա-
տրիչ եզրը: Ուրիշ խօսքերով, փորձել անդրանցնիլ Մեծ Աղէտին զար-
հուրանքը եւ անոր հետեւանքները եւ սփիւռքեան գոյութիւնը տեսնել
որպէս նոր մարտահրաւէր՝ պատմութեան կողմէ նետուած մեր ազգին,
նոր փորձաքար մը, չափելու համար մեր երակը, տոկունութիւնը, մեր
դիմադրականութիւնը, մեզ աւելի թրծելու եւ մեծցնելու: Կոյր չենք՝
շուրջերնիս տիրող քայքայումին դիմաց, որ սերունդներ ամբողջ կը
վարակէ ու կը փճացնէ եւ դեռ հազարումէկ պատճառ ունինք յոռետես
ըլլալու, երբ մեր իսկ լեզուն, ազգային ինքնութիւնը, հաւաքական
կամքը, մշակոյթը եւ աւանդոյթը օրէ օր կը տոգունին: Բայց համոզ-
ուած ենք միաժամանակ, որ Սփիւռքը ունի նաեւ իմաստութեան կայ-
ծեր ալ, որոնք կրնան լուսաւորել եւ ուղեցոյց դառնալ ո՛չ միայն մեզի՝
հայերու, այլեւ ուրիշ ազգերու:

Անկասկած, սերունդներու աւագ պարտականութիւնն է անա-
պրելի Մեծ Աղէտին յիշողութիւնը ապրեցնել, բայց նաեւ ու մանա-
ւանդ «Սփիւռք»ի ներկան արձանագրել: Հասկնալը առաջին քայլն
է՝ Ցեղասպանութեան անմարդկային արարքին տալու պատմական ու
բարոյական իր ճշգրիտ արժէքը:

Ահա թէ ինչ ո՛ւ կը փորձենք առանձնացնել հայ սփիւռքեան գոյա-
վիճակին սեւեռումը ու կը յամառինք առաջարկել ու շեշտել «Հայ
Սփիւռք»ի նոր համադրութիւն մը՝ գիտական նոր տեսաբանութեան մը
հետապնդումով:

3. ՍԱՐԱՖԵԱՆ ՆԻԿՈՂՈՍ, ՎԷՈՒԵԹԻ ԱՌՏԱՐԸ, Փարիզ, 1988, էջ 131:

4. ՍԱՐԱՖԵԱՆ ՆԻԿՈՂՈՍ, նոյն, էջ 65:

ՍՓԻԻՌԻ ԵՒ ԻՆՔՆՈՒԹԻՒՆ

1915ի Մեծ Աղէտին գիտական ու գրական պատմութիւնը տակաւին անաւարտ է, քանի որ պատահածը շատ աւելի մեծ է, քան գրուելիքը: Ա՛յնքան արիւնոտ է արարքը եւ անոր ահազնութիւնը: Իսկ մենք պէտք ունինք ամբողջութեամբ հասկնալու եւ հասկցնելու «Մեր Մեծ Աղէտը», Հայ Դատը, Հայ Սփիւռքը:

1915ի Մեծ Աղէտը, բնորոշուած «Եղեռն», «Սպանդ», «Ոճիր», «Ջարդ», «Սփոռում» եւ կամ «Բնաջնջում» եզրերուն բովանդակած իրականութիւններով, փաստօրէն շատ աւելի աշխարհայեացքի հարց է, զգայնութեան կերպ է, քան պատմական իրողութիւն՝ ժամանակի շերտերուն մէջ բանտուած:

«Սփիւռք»ը դժնդակ արդիւնքն է այս Մեծ Աղէտին ու միաժամանակ Հայ Ոգիին պատասխանը Մեծ Եղեռնին:

Սփիւռքը «մեր» մշակոյթը ապրած է ու կ'ապրի օտարը հերքելով: Բայց մոռնալու չէ, որ սփոռումի օրէնքը անխնայ է եւ անվիճելի: Անհրկա մնայուն ու գրեթէ անգիտակից սփոռում մըն է եւ անկանգնելի շարժում՝ դէպի դուրս ու հեռու...: Սփիւռքը կայ եւ կայ այդ միջավայրին ծնունդը հանդիսացող Հայութիւնը, որ տեւական բախումի մէջ է ազգային դարաւոր ժառանգութիւններ պահպանելու եւ նոր՝ «սփիւռքեան» աւանդութիւններ ստեղծելու հակադիր հրամայականներով: Հայրենիքի գաղափարին եւ իրականութեան կառած մնալու սկզբունքը, արիւնի ճամբով ու հաւատարմութեամբ ազգային արմատներուն վերադառնալու ճիգը եւ Սփիւռքի պատկանելիութեան որոնումը... հակադիր բեւեռներ են անշուշտ՝ լոյսի ու սիրոյ կաթոս հոսուն թելադրանքներով:

Ասոնք են կարծր իրականութիւնները, որոնց իբր հետեւանք՝ սփիւռքահայ հպատակութիւնը շատ խիստ պայմաններ ստեղծած է. «Ապրիլ միշտ անգութ փայլ մը աչքին ու լեղի համ մը քերմին, ըլլալ որսորդը ինքնատիպ ու խիզախ մտածումին, մնալ վիրաւոր ու մարդկային ջերմութեան կարօտ՝ քայց անկախ, շարունակել միշտ անցնող, սիրտը մեղ եւ ամապահով, կռիւի ելլել աշխարհի դէմ՝ յանուն քաղաքական ու մշակութային դժուար հաւատալի իստակներու, պաշտել ու ատել հայութիւնը մոյմ ատեն, հողի ու հայրենիքի խնթ միսքիքին կանթեղը վառ պահել տեղ մը կեանքին մէջ՝ վերադարձի տոմսակ մը սեղմած ափին, քայց մամաւանդ հաւատալ հայ ազգին էութեան ու պատգամին»⁵:

Ուրեմն «Սփիւռք» յղացքը՝ աշխարհագրական վայր ու իմաստ ըլլալէ աւելի, մտավիճակ մըն է այլեւս, մտքի ու մտածումի վիճակ,

5. Վահէ Օշականին են միտքերը:

գաղափարաբանութիւն, հոգեբանական կեցուածք, իմացական իւրա-
յատուկ էութիւն, էապէս գիտակցութեան եւ իմացականութեան որո-
շումի հարց մը:

Դաժան է օրէնքը Սփիւռքեան գոյութեան եւ Սփիւռքայ ըլլալու
երկու վիճակներ կան: Առաջինը, գաղթականի իրավիճակին եւ զգա-
ցումին ցարդ կապուած էր առանձնութեան, անապահովութեան եւ
անձկութեան որոշ երեւոյթներ: Երկրորդը, որով այսօրուան «սփիւռ-
քահայը» կը բնորոշուի, ազատագրուած է զգացական կապանքներէ,
յուզումնախառն կարօտներէ եւ իր ինքնութիւնը կը սահմանէ քաղա-
քակրթական հիմնական բացատրիչներով ու կը սահմանուի շատ աւելի
իմացական եւ առարկայական տուեալներով: Հայ Սփիւռքը անկախ
միաւոր մըն է: Կեանք մըն է, պատմութիւն ու երկիր՝ «գաղութ»,
«արտերկիր» կամ «արտասահման» ըլլալէ առաջ:

Հայ Սփիւռքը մնայուն իրականութիւն է այսօր՝ առանց լեցուե-
լու յուսալքումի, յուսահատութեան, ամլութեան կամ վատասեռումի
դառնութեամբ: Կ'ակնարկենք, անշուշտ, Արեւմտահայութեան եւ ան-
կէ ծնունդ առած Սփիւռքին: Այս Սփիւռքը բազմալեզու, արեւմտա-
կանացած, բազմամշակոյթ եւ յարափոփոխ հայկականութիւն մըն է,
հայ ըլլալու նոր սահմանում մը: «Սփիւռք», որ չի՝ կրնար սեղմուիլ
արագ ակնարկներու սահմանին մէջ, բայց որ իր բոլոր անպատեհու-
թիւններով եւ անբաւարարութիւններով՝ Արեւմուտքի իտէալներով
սնած հայութիւն մըն է, եւ անոր իսկական մտաւորականները, յաճախ
նիւթապէս թշուառ եւ բազմութիւններու կողմէ անտեսուած ու չզնա-
հատուած, եղած են ազատ, ինքնակամ ու խրոխտ:

Սփիւռքը համամարդկային բնոյթ մըն ալ կը կրէ, որուն բարիքը
պիտի վայելէինք, եթէ գիտակցէինք անոր դրական կարելիութիւն-
ներուն: Սակայն, դեռ չենք հասած հոն ու մեզմէ շատեր կը հաւա-
տան թէ Սփիւռքը, որ Աղէտին ծնունդն է՝ չի՝ կրնար Մեծ Աղէտէն
տարբեր բան մը ըլլալ:

Անհուն հարցեր կան հոս. շատ բան կայ սորվելիք, շատ բան
գուրգուրալիք ու մանաւանդ պահպանելիք:

«Սփիւռք» յղացքին մէջ վստահաբար հարկ է վերարթնցնել նաեւ
«Լեզու» եւ «Արիւն» հասկացողութիւններն ալ (վերջինը՝ իբր «հող»
ու «երկիր» տարազով)․ նիւթ մը, որ Կոստան Զարեան առիթով մը
շօշափեր էր անցեալին⁶:

Այս տեսակէտով, յատկապէս վերյիշելու եւ վերարժէւորելու է
է. Ակնունիի «Դէպի Երկիր» սրտառուչ ու նշանակալից կոչը, որ
կ'ողղէր անոնց, որ 1900ական տարիներուն, 1894-6ի Համիտեան

6. Տե՛ս «Գեղունի» (գեղարուեստական պարբերագիրք), Վենետիկ, 1949, Մխիթար
Վրդ. Սեբաստացիի նուիրուած Բացառիկ, էջ 104-106:

Կոտորածներուն եւ տիրող արհաւիրքին իբր հետեւանք, կը լքէին հայրենական հողերը ու կը հեռանային...:

«Կա՛ց, հայ մարդ, կա՛ց:

Դա չէ մանապարհը, որ տանում է դէպի փրկութիւն: Ազատագրական արիւնը չէ – մոյմիսկ ա՛յնքան սոսակալի, ինչքան «հայկական կոտորածները» – որ սպաննում է մի ազգ, այլ թափառական կեանքը, մուրացկանի պայուսակը, անվերջ տարագրութիւնը: Մի՛ մոռացիր, որ քսան տարուց աւելի է ինչ օսմանեան բռնապետութիւնը ե՛ւ հրդեհաճգութեամբ, ինչպէս Վանում ե՛ւ սովով՝ ինչպէս Վասպուրականում, ե՛ւ կոտորածով՝ ինչպէս ամբողջ Հայաստանում, մի նպատակ միայն ունի՝ վերացնել, նուազեցնել հայերին, դարձնել Հայաստանը անհայաբնակ, որպէսզի այդպիսով վերջապէս մի ծանր գերեզմանաճար դրուի այն մեծ, ոգեւորիչ հարցի վրայ, որ քսաներկու տարուց ի վեր գրադեցնում է ամբողջ Եւրոպան «Հայոց Հարց» անունով եւ որ 600 տարուան ստրուկ ժողովրդի սրտում ծնել է ե՛ւ յոյս, ե՛ւ հերոսութեան ձգտում, ե՛ւ մարդկային մեծ իտեալներ...: Այո՛, իտեալներ, որոնց իրագործման համար հայութիւնը միայն մի վայր ունի՝ Հայաստան: Մայր հայրենիքից դուրս՝ հայ ժողովուրդը ազգ չէ, այլ փշրամփ, թափթփուկ, անպէտք եւ անկարելի:

Երկիրն է նրա պատմական դերի բնմը, նրա կուլտուրական քաղձանքների հնոցը»⁷:

ՍՓԻԻՌԻ ԿԱՄ «ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ՄՇԱԿՈՅԹ»

Հարցերը, սակայն, այնքան ալ դիւրին չեն լուծուիր կեանքին մէջ: Ազգային ժառանգին մէկ մասը կորսուելու սպառնալիքին տակ կը գտնուի՝ Սփիւռքային կեանքի պայմաններուն բնական բերումով: Իսկ Հայ Սփիւռքը մտած է արդէն դիմազծային յեղաշրջումի նոր շրջանի կամ հանգրուանի մը մէջ: Եւ իրերու այս դրութեան մէջ, երբ քաղաքական ու պատմական նոր տուեալներ մուտք կը գործեն հայ հաւաքական իրականութենէն ներս, պայմանաւորուած տեղական, շրջանային ու միջազգային ազդակներով, Սփիւռքի մէջ «Հայութեան» հիմնական գրաւականը կը մնայ «Արեւմտահայ Մշակոյթ»ը:

Կարելի չէ մոռնալ եւ անտեսել, որ Սփիւռքի հայը հսկայ ժառանգորդն է եւ տէրը Արեւմտահայ Մշակոյթին (ինչպէս Արեւմտահայերէնին): Հետեւաբար, նաեւ «պաշտպան»ը անոր եւ վերաբժէկորողը եւ ընդլայնողը: Հայ Դատը միայն հողային պահանջ չէ, այլեւ ինքնութեան, ոգիին, ուրոյն էութեան եւ արժէքներուն, ինչպէս նաեւ

7. Տե՛ս «Դրօշակ», (Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Օրգան, Ժընեւ), 1900, Յուլիս, Թիւ 5, (106), էջ 66:

լեզուի պահպանումին, որպէս կենսական ու գլխաւոր երաշխիք՝ 1915ի Հայ ժողովուրդի Յեղասպանութեան ձախողութիւնը հաստատող: Զանց կ'ընենք գրական ու արուեստի կալուածներէն քաղուած անուններու եւ նուաճումներու թուումը: Պարզապէս կ'ուզենք շեշտել, որ այսօր գոյութիւն ունի մշակութային բարձր նուաճում մը գեղեցկութիւններու եւ արժէքներու, յաճախ տառապանքներով ծնած համամարդկային իրաւ ապրումներու աշխարհ մը, որ «Արեւմտահայ Մշակոյթ» կը կոչուի:

Մենք կը հաւատանք, որ այս ամբողջը որակ եւ արժէք է բովանդակ Հայութեան համար եւ ամէն գիտակից ու հայրենասէր հայու գորգորանքին արժանի:

Գնահատել ու տէր կանգնիլ, ուրեմն, սփիւռքահայ ժառանգութեան, այսինքն Արեւմտահայ եւ Սփիւռքահայ Մշակոյթին: Անոր գոյատեւումը պէտք է մեծագոյն մարտահրաւէրը ըլլայ ո'չ միայն արեւմտահայուն, այլեւ բովանդակ Հայութեան: Եթէ նոյնիսկ սփիւռքահայը կամ արեւմտահայը յաջողած չէ յաղթահարել այս իրականութիւնը, հայութիւնը, իր բոլոր թեւերով, ստանձնելու է անոր փրկութեան ու պահպանումին, պաշտպանումին եւ տեւականացումին պատասխանատուութիւնը, փոխանակ կարճատեսութեան թերագնահատելու, ստորադասելու կամ մինչեւ իսկ հեզնելու:

«Սփիւռքը անտեսուած սէր մըն է» այսօր:

Սկզբունքային, գիտակից դիրքորոշում մը պէտք է ըլլայ Սփիւռքահայութեան կամ Արեւմտահայութեան նշանակութեան ու կարեւորութեան գիտակցումը՝ իբր «ապրող» Հայ հաւաքականութիւն, որ շատ վեր է Մեծ Աղէտի ահաւոր աւերէն, կորուստէն ու ժամանակներէն: Ասոր իբր անմիջական հետեւանք, Սփիւռքը, իր հաւաքական ամբողջ ոյժերով, հոսանքներով ու կառոյցով, ՊԱՐՏԱԻՈՐ է ԱՄԷՆԷՆ ԱՌԱՋ ՀՈԳԱԼ ՆԱԽ ԻՐ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԿԱՐԻՓՆԵՐԸ, որպէս ժառանգորդ, պաշտպան եւ վերարժէւորող Սփիւռքահայ կամ Արեւմտահայ Մշակոյթին՝ նիւթական թէ իմացական մակարդակներու վրայ:

Սփիւռքը, անկասկած, պարտականութիւն ունի Հայաստանի բարգաւաճումին օժանդակելու: Իսկ Հայրենիքը, իր կարգին, պարտաւոր է օժանդակել Սփիւռքի ներքին թէ արտաքին պահպանութեան, բարօրութեան եւ զօրութեան:

Սփիւռքին շահը կը պահանջէ ի'ր իրաւունքները: «Արեւմտահայ զգայնութիւնը» պէտք է ապրի: Սփիւռքը այլեւս «գաղութ» չենք ուզեր նկատել: Սփիւռքը «երկիր» է: Սփիւռքը ճակատ է: Ծակատումի դատ: Սփիւռքի ճակատը ա'յնքան կարեւոր է, ո'րքան ուրիշ ճակատներ: Բաւ է, որ բարոյական ու ոգեկան ճակատները տեղի չտան...:

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ՝ ՀԱՅ ՍՓԻԻՌԻՆ ՀԱՆԴԵՊ

Հայրենիքի մէջ, որ ինքնիշխան ու անկախ երկիր մըն է հիմա, տակաւին աւելի քան կէս դարու թունաւոր մթնոլորտը լրիւ չէ մաքրուած: Հայաստան եւ Սփիւռք գիծի վրայ՝ ժխտական բացայայտ հոգեփոխութիւն մը կը նշմարուի: Որուն հետեւանքով ալ, Հայաստանի եւ Սփիւռքի կապերը եւ յարաբերութիւնները անբաղձալիօրէն կը գտնուին տազնապալից, մտահոգիչ ու վնասաբեր հանգրուանի մը մէջ: Երկրին քաղաքական, տնտեսական եւ ա՛յլ դժուարութիւնները կը փորձեն հեռացնել Հայրենիքը մեր տեսողութենէն եւ հասողութենէն:

Սփիւռքը դեռ անտեսուած սէր մը կը մնայ...: Եւ հիմա, քայլ մը աւելի Սփիւռք կը զգանք մենք մեզ:

Բայց անտարբեր ըլլալ Սփիւռքեան ոգեկան հարստութեան հանդէպ՝ պիտի նշանակէ միայն վտանգի ենթարկել զանիկա: Լուծարքի ենթարկել Սփիւռքը, անոր ժառանգութիւնը եւ ներկայ կառոյցները՝ ազգաւնաս մտածում է: Անտեսումի անգիտակից ու անազնիւ այս վերաբերումը շատ ծանր հետեւանքներ նայ ունենալ նաեւ ազգային միասնութեան տեսակէտէն:

Իսկ «Արեւմտահայ մշակոյթին ձուլումը՝ Արեւելահայ մշակոյթին մէջ» անգիտակից ոգիով յայտնուած անհեթեթ կարծիքին դէմ՝ Վահէ Օշական կը ծառանայ յստակատէս իր պատասխանով. «Ո՛չ. սա ի՛նչ ահաւոր հեռապատկեր է: Ո՛չ, մենք պիտի պահենք մեր ժառանգը, պիտի գեղեցկացնենք որքան կրնանք. պիտի անի ու բարգաւաճի Վարուժաններու, Ինտրաններու, Թէֆեաններու, Օշականներու եւ Մեծարեւոյններու մշակոյթն ու լեզուն՝ բովն ի վեր Հայաստանի մշակոյթին, նոյնիսկ ու մանաւանդ երբ՝ երջանիկ օր մը, հայրենիքի հաւաքուի հայութեան գէթ կարեւոր մէկ մասը: Արեւմտահայ ոգեկան հայրենիքին ապագան մեր ձեռքն է, որովհետեւ անիկա՝ է մեր արմատը Սփիւռքեան իւրայատուկ արուեստին եւ իբր այդ՝ մեր մեծագոյն գուրգուրանքին առարկան է: Իրականութեան մէջ, Արեւմտահայ եւ Սփիւռքահայ մշակոյթին արմատներուն մէկ մասը կը գտնուի Արեւմուտքի եւ միւս մասը՝ Արեւմտահայաստան: Երկուքն ալ պէտք է ապրին, մոխաման՝ իրենց մերձեցարան մտածումի եւ արուեստի: Բայց եթէ անհոգ ու թոյլ գտնուինք՝ կը կորսուին անկասկած»⁸:

Տակաւին շատ կանուխ կը թուի Սփիւռքահայութեան եւ Արեւմտահայութեան զանգուածային դարձ մը եւ համատեղ կենք մը երեւակայել Հայաստանի մէջ, ինչ որ կրնար երաշխաւորել մեր լեզուին ու մշակոյթին ապահով գոյատեւումը:

8. Տե՛ս «Ասպարէզ» (օրաթերթ, Լոս Անճելէս), Ուրբաթ, 3 Մայիս, 1991, էջ 9:

Թէեւ խելացի, արթուն, հայրենասէր, գիտակից ու կամքի տէր հայու մը համար շատ ալ տարբերութիւն պէտք չէ ընէ՝ Հայաստան կը գտնուի թէ Սփիւռք: Էականը ներքին համադրումն է, ազգային սեփական ինքնութիւնը պահպանելու յամառութիւնն է:

Կը մնայ սպասել եւ ակնդէտ ակնկալել մեր հայրենի կառավարութեան հեռատես, յստակ, վճռական եւ անյապաղ որոշումներուն՝ հասկնալու համար թէ որպէս պետական միտք ու համահայկական անկիւնադարձային նախաձեռնութիւն՝ ի՞նչ քաղաքականութիւն պիտի որդեգրէ Սփիւռքի էութեան հանդէպ. պիտի գիտակցի՞ անոր իւրայատուկ արժէքին ու կոշումին, անոր ինքնութեան անհատականութեան կամ իմաստին ու կարեւորութեան:

ՍՓԻՒՌԻ ԵՒ ԼԵՁՈՒ

Ի՞նչ կը նշանակէ հայ ըլլալ արտասահմանի մէջ. ի՞նչ կը նշանակէ «օտարութեան մէջ ապրիլ» եւ տակաւին ճիգ թափել «հայութիւնը պահելու համար». որքան կարեւոր են լեզուն եւ աւանդութիւնները «հայ մնալու համար»...:

Հայ «ինքնութեան» յղացքը, ամէնէն առաջ, Հայերէն Լեզուի գործածութեան մէջ է որ ինքզինքը կ'իրագործէ: Իսկ «Լեզուն» անբաժանելի բաղադրիչ մըն է, իբր մշակութային ինքնութեան գլխաւոր ազդակ: Արուեստ, ոգի, աւանդութիւն, հայրենիք կամ եկեղեցի կարեւոր են, սակայն առաջին դիրքը վերապահուած է միշտ լեզուին: Լեզուն կը նկատենք ո՛չ միայն իբրեւ հաղորդակցութեան կամ խօսակցութեան կամուրջ մը լոկ հայերու միջեւ, այլ մասնաւոր իբրեւ իմաստութեան ու ոգեկան ոյժի աղբիւր: Այսինքն, գրուած ու կարդացուած լեզուն, որովհետեւ գրուած լեզուն է միայն, որ իր մասնայատուկ իմաստը կը շարունակէ պահել, երբ դարերու մէջէն սերունդներ կը յաջորդեն իրարու. միայն գրուած լեզուն է, որ ժամանակի ճախարակով մահէն անդին կը շարունակէ ապրեցնել, աճեցնել ու փոխանցել արժէքները եւ արժանիքները մարդոց:

Կ'անդադառնանք նաեւ ուղղագրութեան չարչարուած հարցին: Հին խնդրի մը նոր բռնկումին:

Դասական Ուղղագրութեան եւ Արեւելահայերէնէն Արեւմտահայերէնի լեզուական անկարգապահ փոխանցումներու պարագաները (յօդուածներու, գիրքերու, հեռատեսիլային հաղորդումներու, երգերու եւ ժողովրդային մշակոյթի կամ ֆոլկլորի ա՛յլ խողովակներով)՝ կը մնան մեր ժամանակներու ազգային առաջնահերթ մտահոգութիւնները:

Ծանօթ իրականութիւն է, որ ժամանակակից Հայերէնի երկու թեւերն ալ -Արեւմտահայերէնը եւ Արեւելահայերէնը- ունին քերա-

կանական, բառային եւ հնչական տարբերութիւններ: Մինչեւ որ օր մը՝ երկու լեզուները ներդաշնակուին, իրենց կառոյցներով, յատկանիշներով ու արժէքներով պէտք է պահպանենք երկու բարբառներն ալ: Պատմական երկու հարուստ ճիւղերն են անոնք լեզուական միեւնոյն բունին՝ Հայերէն Լեզուին: Մեզի կը մնայ լրջմտութեամբ յարգել երկուքն ալ, կիրարկել ու պաշտպանել երկուքն ալ անջատաբար, որպէսզի ապրին իբրեւ թանկագին ժառանգը հայ ժողովուրդին:

Անկախ Հայրենիքը աստիճանաբար պէտք է ձերբազատի հին ու քանդիչ վարչակարգին քաղաքական, տնտեսական, ընկերային, ազգային ու կրօնական կապանքներէն:

Առանց ճիշտի ու սխալի, առանց մօտաւոր ու հեռաւոր շահերու կամ հաշիւներու, պետական ու քաղաքական անկախութեան հետ՝ Դասական Ուղղադրութիւնը պէտք էր վերադառնալ Հայրենիք... բայց չվերադարձաւ: Եւ Հայրենիքի մտաւորականութեան ստուար թիւ մը նոյնիսկ դէմ կեցաւ անոր բարերար եւ արդար վերադարձին: Մեր կարծիքով, պատմական սխալ մը դարձեալ, որուն զրական հետեւանքները իսկապէս համահայկական մեծ նշանակութիւն պիտի ունենային: Եւ դժբախտաբար, Հայաստանի նոր սերունդը կը շարունակէ սորվիլ սովետական վարչակարգէն «պարտադրուած» ուղղադրութիւնը, որուն դէմ, ժամանակին, հոգի մաշեցուց ու ծով մելան հոսեցուց Սփիւռքի բարձր ու արժանաւոր մտաւորականութիւնը:

Դասական Ուղղադրութեան վերադարձի ու վերականգնմի հարցին լուծումը կը կարօտի այլեւս պետական միջամտութեան եւ օգնութեան: Համազգային հարց մը՝ որ ներառնելու է հայ պետականութեան հունին մէջ եւ դարձնելու անյետաձգելի սեւեռումի առարկայ:

Մեր ազգային ամենաթանկագին գանձը կը նկատենք ազգային մեր լեզուն՝ Հայերէնը, իր երկու լեզուաճիւղերով եւ Դասական Ուղղադրութեամբ... եւ ի գին ամէն դժուարութեան՝ պարտաւոր ենք միասնական գիտակցութեամբ պաշտպանել եւ պահպանել գանոնը:

Եթէ կորսնցնենք Արեւմտահայերէնը եւ Դասական Ուղղադրութիւնը, վստահաբար պիտի կորսնցնենք նաեւ Հայ Դատը եւ անոր կապուած մեր համընդհանուր ժառանգը: Արեւմտահայաստանի գաղափարը յատկապէս մարմնաւորուած կը տեսնենք Արեւմտահայերէն Լեզուին մէջ:

Վերջապէս, մենք մեր մայրենի լեզուն կը գործածենք ո՛չ միայն իբր աղօթքի միջոց, այլեւ ու մանաւանդ աշխարհն ու մարդկութիւնը ըմբռնելու եղանակ, պատմութիւնն ու անցեալը կեանքին բերելու միջոց: Որպէսզի անով մեր ժողովուրդը կմախք ու մկան ունենայ, զօրանայ ու ծառայէ հայութեան ինքնութիւնը պրկելու, հայութեան ազգային գիտակցութիւնը ամրապնդելու եւ վերջապէս... «Կեանքը» գրկել տանելու հոն՝ ուր որ պէտք է:

* * *

«Բազմավէպ»ի ներկայ թիւը, բնոյթով ա՛յլ յօդուածներու կողքին, ընթերցողներուն կը ներկայացնէ նաեւ տասնեակ մը աշխատանքներ, հեռուէն ու մօտէն Հայ Սփիւռքին առընչուող՝ պատմական, տեսական, գրական, մշակութային ու վերլուծական մօտեցումներ, որոնք այս առիթով կը միտին օգտակար դառնալու մեր ժամանակակից ազգային պատմութեան որոշ հարցերուն եւ յղացքներուն այժմէական տեսութեան, լուսաբանութեան եւ դրական ինչ-ինչ երեւոյթներու արդի հասկացողութիւններու սահմանումին եւ գնահատումին:

Վեներտիկ

Հ. ՏԱՃԱՏ ՎՐԴ. ԵԱՐՏՏՐԵԱՆ